# ՈՐՈՇՈՒՄ N 70-Ն

17.Սեպտեմբերի.2021թ.

գ. Ակունք

17. ԼՍԵՑԻՆ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքից 352 ք/մ մակերեսով տարածքը վարձակալական հիմունքներով տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

/ԶԵԿ. ՆԻԿՈԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով »Տեղական ինքնակառավարման մասին« ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16 և 18-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին

որոշեց՝

1. Տրամադրել՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ակունք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Բարեկամության փողոց 1 հասցեում գտնվող մշակույթի տան շենքի <<Արարողությունների սրահ>> -ը 352ք/մ մակերեսով՝ վարձակալական հիմունքներով՝ 5 տարի ժամկետով և վարձավճարի չափ սահմանել՝ յուրաքանչյուր արարողությունից 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև վարձակալը պարտավոր է վճարել կոմունալ վարձավճարները :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ.

| հ/հ | Ա. Ա. Հ. | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| 1 | Վարդանյան Արտյոմ | [signature] | | |
| 2 | Հարությունյան Գեղամ | [signature] | | |
| 3 | Հովհաննիսյան Ստյոպա | [signature] | | |
| 4 | Սիմոնյան Վահան | [signature] | | |
| 5 | Եղիշե Աղաբեկյան | [signature] | | |
| 6 | | | | |
| 7 | | | | |

Համայնքի ղեկավարի՝ [signature] Ն. Խաչատրյան